



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

### ՈՐՈՇՈՒՄ

#### ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 07.06.2017 թվականի թիվ 148-Լ որոշմամբ հաստատված «Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրի» (**այսուհետ նաև՝ Ծրագիր**) 3.6 ենթակետի, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի 21.06.2017 թվականի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված «Աշխատասենյակից օգտվելու ընթացակարգի» (**այսուհետ նաև՝ Ընթացակարգ**) 2-րդ կետի պահանջներով,

Հիմք ընդունելով Փաստաբանների պալատում երիտասարդ փաստաբանների անվճար օգտագործմանը հատկացված աշխատասենյակից (**այսուհետ նաև՝ Աշխատասենյակ**) օգտվելու հայտերի ընդունման և քննարկման ժամանակահատվածը սահմանելու, ինչպես նաև հարակից հարցերը կանոնակարգելու անհրաժեշտությունը,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհուրդը՝

### Ո Ր Ո Շ Ե Ց Ց՝

1. 2023 թվականի հունվար-հունիս ժամանակահատվածում Աշխատասենյակից օգտվելու համար ընդունել հայտեր՝ 2022 թվականի դեկտեմբերի 20-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 26-ը ներառյալ:

2. Սահմանել, որ՝

2.1) Աշխատասենյակից օգտվելու հայտերն ընդունվում են էլեկտրոնային փոստով (ստորագրված և սկանավորված տարբերակով) [info@advocates.am](mailto:info@advocates.am) կամ [youthboard@advocates.am](mailto:youthboard@advocates.am) էլեկտրոնային հասցեով, ինչպես նաև հայտերի ընդունման ժամանակահատվածում ներառված յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 10:00-ից մինչև 17:00-ը, ՀՀ, ք. Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ հասցեում:

2.2) Հարցազրույցն անցկացվելու է ՀՀ, ք. Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ հասցեում 2022 թվականի դեկտեմբերի 28-ին, ժամը 15:00-ից սկսած՝ հավակնորդների հետ նախապես համաձայնեցված ժամին:

20 դեկտեմբերի 2022թ.

թիվ 6-Լ

ք. Երևան

2.3) Փոստով ուղարկված հայտերն ընդունված չեն համարվի, եթե ՀՀ փաստաբանների պալատը փոստային առաքանին փաստացի ստանա 2022 թվականի դեկտեմբերի 26-ից հետո:

3. Հաստատել Աշխատասենյակից օգտվելու համար հայտի ձևը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ Փաստաբանների պալատի  
Երիտասարդական խորհրդի նախագահ՝  
Միքայել Դանիելյան

ՀՀ փաստաբանների պալատին

\_\_\_\_\_ից  
(անուն, ազգանուն)

արտոնագրի № \_\_\_\_\_ տրված՝ \_\_\_\_\_ թ.

հասցե՝ \_\_\_\_\_

էլեկտրոնային փոստի հասցե՝ \_\_\_\_\_

հեռախոս՝ \_\_\_\_\_

«\_\_\_» դեկտեմբեր 2022թ.

### ՀԱՅՏ

Սույնով հայտնում եմ, որ ցանկանում եմ օգտվել Աշխատասենյակից:

Մասնագիտական ուղղվածությունը՝ \_\_\_\_\_  
(նշել քրեական կամ քաղաքացիական և վարչական)

Աշխատանքային գործունեության իրականացման վերաբերյալ  
տեղեկություն՝ \_\_\_\_\_

Գիտական և/կամ մանկավարժական բնագավառում աշխատանքային գործունեություն  
իրականացնելու վերաբերյալ տեղեկատվություն<sup>2</sup> \_\_\_\_\_

Հայտնում եմ, որ՝

- չունեմ աշխատասենյակ,

- համաձայն եմ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 07.06.2017թ. թիվ 148-Լ որոշմամբ հաստատված Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրով և ՀՀ փաստաբանների պալատի Երիտասարդական խորհրդի 20.06.2017թ. թիվ 1-Լ որոշմամբ հաստատված աշխատասենյակից օգտվելու ընթացակարգով սահմանված դրույթների հետ,

- համաձայն եմ անվճար իրավաբանական օգնություն տրամադրել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 07.06.2017թ. թիվ 148-Լ որոշմամբ հաստատված Երիտասարդ փաստաբանների աջակցման ծրագրով և ՀՀ փաստաբանների պալատի Երիտասարդական խորհրդի 20.06.2017թ. թիվ 1-Լ որոշմամբ հաստատված աշխատասենյակից օգտվելու ընթացակարգով սահմանված նվազագույն քանակով:

Դիմող՝ \_\_\_\_\_  
(ստորագրություն)

<sup>1</sup> Պետք է նշվի ինչպես մասնագիտական, այնպես էլ ոչ մասնագիտական աշխատանքային գործունեության մասին

<sup>2</sup> Նշվում է գործատու(ներ)ի վերաբերյալ տեղեկություն, մասնավորապես՝ գործատու(ներ)ի տվյալները (անուն, ազգանուն, հայրանուն, իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը), աշխատաժամանակի տևողությունը